

Մեզի հասած արձանագրութեանց եւ ժամանակակից պատմական-մատենագրական քանի մը հակիրճ վկայութիւնները անշուշտ պիտի չբաւեն զոհարարութիւնը գաղափար մը տալու իրենց մասին: Ոչ ալ լուրջ ճիգ մը կատարուած է ցարդ զանոնք զոնէ առձեռն նիւթերով ամփոփ ներկայացնելու: Հոս վերջս Գարեգին Կաթողիկոս Յովսէփեան կ'երեւի մտադիր էր այս Մամիկոնեաններով զբաղուելու, ինչպէս զբաղած էր Պոօշեանց, Օրպէլեանց եւ այլ տոհմերով: Ան կը գրէր. «Տոհմի (Գոեղի Մամիկոնեանց) պատմութեան եւ շինարարութեան մասին ունինք առանձին աշխատութիւն (ԺԳ Գարից ըսկըսած)»(2): Քանի որ իր ձեռագրական թողօնին մէջ չէ գտնուած այս աշխատութիւնը, ստիպուած ենք խորհելու որ Կաթողիկոսը մտադրութեամբ մը մասին է որ կը խօսի եւ ոչ թէ կատարուած աշխատութեան մը մասին: Շատ հաւանարար նպատակ ունէր նման դորձ մը կատարելու եւ դուրսէ ծրագրած ալ էր. այլապէս ԺԳ Գարիցն պատմութիւն ունեցող այս տոհմին մասին պիտի չգրէր «ԺԳ Գարից սկսած»: Համառօտ կերպով գրած է նաեւ ողբացեալ Արշակ Այւոյսաճեանը Գոեղի այս տոհմին մասին, թէ եւ քանի մը շփոթութիւններով, իր «Պատմական Հայաստանի Սահմանները» կոթողային գործին մէջ:

Ինչպէս ըսի, տոհմին պատմա-մատենագրական տեղեկութիւնները պատահական եւ կցկտուր են: Իրենցմէ մեզի հասած է միայն երկու ձեռագիր Աւետարան յիշատակութիւններով: Գարեգին Կաթողիկոս կը խօսի ձեռագրական յիշատակարաններու մասին առանց ուրիշ մանրամասնութեան: Արդեօք մեզի ծանօթներէն զատ ուրիշներ ալ գիտէր: Եթէ ծանօթ էր, առոնք ինձի յայտնի չեն (բացի Համադասպ Եղիսկոպոսի համար եղած կամ յիշուած ձեռագիրներէն):

Գոեղի Մամիկոնեաններու շինարարութիւնն ալ մեծ չափերու չի հասնիր: Հաւանարար նիւթական միջոցները իրենց թոյլ տուած չեն խոշոր շէնքերով եկեղեցաշինարարութեան: Ըստ երեւոյթին, ենթակայ աւատապետութիւն մը եղած են Ջաքարէ եւ Իւանէ Ամիր Սպասարներու վերին հրամանատարութեան տակ եւ զինուորական պարտականութիւններ ստանձնած են, որմէ է հաւանարար իրենց նիւթական կարիքներուն բաւարարութիւնը: Այս վիճակը շարունակուած է սպասարներուն որդւոց՝ Աւագի եւ Շահնշահ օրով ալ: Բնական է ենթարկուած են Թաթարներուն, ծառայած անոնց, պատերազմներու մասնակցած եւ զոհեր ալ տուած: Գոեղ ընտանիքի անտեսական համեստ միջոցներով չէր կրնար թոյլ տալ որ Մամիկոնեան Համագասպեան տոհմը փայլէր իր յուշարձաններու այն առատութեամբ եւ զեղեցկութեամբ՝ որով մեզի հասած են, եթէ սպասարներու հրամանատարութեան տակ իրենց մասնակցած պատերազմներուն յաջողութիւնները մեծապէս սատարած չըլլային իրենց նիւթական միջոցներուն:

Իրենցմէ մնացած ճարտարապետական եւ քանդակագործական (խաչքար) յուշարձանները արդարեւ կը վկայեն անոնց ընտիր ճաշակին եւ զեղարուեստական հասկացողութեան մասին, առանց սակայն հասնելու մեծագործութեան եւ Պոօշեաններու, Օրպէլեաններու, Գոփեաններու կատարածներուն արժէքին: Իրենց մեկենասած մանր արուեստներէ արտադրութիւններ չեն հասած մեզի, բացի իրենց տուած երկու արձանագրական վկայութիւններէ: 1221ին արձանագրութեան մէջ Մարծպան Բ կը վկայէ որ Բարձրաբաշի վանքը «գարդարեցի մեծագին պատուական սպասիւք խաչիւք եւ մասամբք

(2) «Հաւուց Թառի Ասեմափրկիչը» էջ 72ա: 188807290670 սոց ցեղաստանի» (1)